

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Mega Brand LLC-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊԶԲ-24/100 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	<p>Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմի ձայնային համակարգը բաղկացած է ձայնային համակարգի մոդուլներից, ձայնային համակարգի սաբ-բուլֆերներից, ձայնային համակարգի բեմի մոնիտորներից, ակտիվ մոնիտորներ ձայնային համակարգի համարից, ձայնի կառավարման թվային վահանակից, ձայնային վահանակի կապի արկղից, գլխի անլար խոսափողից, սպլիտերից, ձեռքի անլար խոսափողից, լարով խոսափողից, ձայնի ուժեղացուցիչից, լարերից, ձայնային համակարգի համար նախատեսված կախիչներից, վիդեո պրոեկտորից: Նշված սարքերը սարքաորումները և պարագաները պետք է համապատասխանեն կից ներկայացված տեխնիկական առաջադրանք-2-ին: Եթե անհրաժեշտություն առաջանա, Մատակարարը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով տրամադրել տեխնիկական առաջադրանք-1-ում չնշված լրացուցիչ սարքեր, սարքավորումներ, մասեր և պարագաներ, որ սույն համակարգը գործի: Լրակազմում նշված ապրանքների երաշխիքային ժամկետները՝ առնվազն 1 տարի: Լրակազմում նշված ապրանքների համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցիչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի գործարկումը, ինչպես նաև համապատասխան մասնագետի հրահանգավորումը իրականացվում է Մատակարարի կողմից: Լրակազմում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում տրված են դրանց նվազագույն պահանջները (կամ առավելագույն պահանջները, եթե խոսքը գնում է բացասական</p>

ցուցանիշի մասին. բացասական ցուցանիշները նշված են մեկ աստղանիշով` «*»): Իսկ եթե ցուցանիշը սահմանում է միջակայք, ապա առաջարկվող ապրանքը պետք է ներառի ցուցանիշի նշված միաջակայքը: Եթե ցուցանիշը նշված է երկու աստղանիշով` «**», ապա ցուցանիշը պետք է պահպանվի նույնությամբ: Համակարգում ներառվող սարքերը, սարքավորումները, մասերը և պարագաները (ներառյալ դրանցում կիրառվող տեխնոլոգիաները) պետք է լինեն համատեղելի միմյանց հետ, ինչպես նաև լինեն տարածված, այսինքն` տեխնոլոգիաները կիրառվեն 2-ից ավել արտադրողների կողմից: Ապրանքների տեղաբաշխումը, լարանցումները և գունային լուծումները պետք է համաձայնեցնել Գնորդի հետ` կապված տարածքի առանձնահատկություններից: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ տեղաբաշխման, լարանցումների և գունային լուծումների հնարավոր տարբերակներին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Mega Brand LLC в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 22405000000000000000-24/100 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	